ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/69, 26.09.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ

Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հանձնաժողովի 12.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը բավարար գնահատելու, նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:
2. Պարտավորեցնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ից /տնօրեն Հ.Մնացականյան/
Հասցե՝ ՀՀ, ք.Գավառ, Անդրանիկի 5
Հեռ: (077) 11 77 77

էլ.փոստ՝ Buildingdep1@mail.ru

Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված
ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթ

Բողոք

«Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ

Բողոքի նախապատմությունը և էական նշանակություն ունեցող փաստերը

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթ:

Վերոնշված բաց մրցույթին մասնակցել է նաև «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, կոնսորցիում):

«Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացրած հայտի գնային առաջարկը «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Հովհաննիսյանի փոխարեն էլեկտրոնային ստորագրությամբ 11.09.2019թ. ստորագրված, հաստատված է Պետրոսյան Մարգուշայի կողմից:

Համաձայն 12.09.2019թ. տրված լիազորագրի՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Հովհաննիսյանը լիազորել է Պետրոսյան Մարգուշային ստորագրել տնօրենի անունից «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը:

Համաձայն 11.09.2019թ. «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեություն իրականացնելու մասին պայմանագրի 2.2. կետի՝ հայտի ապահովում ներկայացնելու պարտականությունը դրված է «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի վրա:

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին 10.09.2019թ. տրված թիվ Մ-16315-01/88 բանկային երաշխիքի 1-ի կետի՝ «Սույն բանկային երաշխիքի /այսուհետ՝ Երաշխիք/ հանդիսանում է Ծաղքաձորի համայնքապետարան /այսուհետ՝ բենեֆիցիար/ կողմից «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին տրամադրվելիք՝ Ծաղկաձորի համայնքի Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանք կատարելու համար ապահովում:

Նույն երաշխիքի 2-րդ կետի համաձայն՝ Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն պարտավորվում է Բենեֆիցիարի գրավոր պահանջով վերջինիս վճարել մինչև 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար...:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ N Մ-43277-1
26.02 2020թ.

Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 12.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի համաձայն «Հրազդանի ՃՇՇՋ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը գնահատվել է որպես հրավերի պահանջներին բավարարող, իսկ արդեն նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն կոնսորցիումի մասնակիցները ճանաչվել են որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Բողոքի իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բաց մրցույթի հրավերի 7.1-րդ կետի համաձայն մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Հրավերի 2-րդ մասի 3.1 կետի համաձայն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գտնում ենք, որ «Հրազդանի ՃՇՇՋ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացրած հայտի գնային առաջարկը և բանկային երաշխիքը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «Հրազդանի ՃՇՇՋ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը գնահատելով որպես հրավերի պահանջներին բավարարող, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները հետևյալ հիմնավորմամբ.

«Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացրած հայտի գնային առաջարկի մասով

Ինչպես արդեն նշել ենք, հայտի փաթեթում առկա է 12.09.2019թ. տրված լիազորագիրը, որով «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Հովհաննիսյանը լիազորել է Պետրոսյան Մարգուշային ստորագրել տնօրենի անունից «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ Մարգուշա Պետրոսյանը ձեռք է բերելու իրավունք ստորագրել «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը միայն 12.09.2019թ.:

Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի ողջ փաթեթը, այդ թվում նաև շտկման ոչ ենթակա գնային առաջարկը, տնօրեն Գևորգ Հովհաննիսյանի փոխարեն էլեկտրոնային ստորագրությամբ 11.09.2019թ. ստորագրված, հաստատված է Պետրոսյան Մարգուշայի կողմից /ակնհայտ երևում է էլեկտրոնային ստորագրությունից/, ով այդ օրվա դրությամբ դեռևս լիազորված չէր ստորագրելու նման փաստաթուղթ:

Այս հիմքով գնահատող հանձնաժողովը «Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը, մասնավորապես գնային առաջարկի մասով, պետք է գնահատեր որպես հրավերի պահանջներին չբավարարող, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ պարտավոր էր մերժել կոնսորցիումի հայտը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից «Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ին 10.09.2019թ. տրված թիվ Մ-16315-01/88 բանկային երաշխիքի մասով

Գտնում ենք, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից «Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ին 10.09.2019թ. տրված թիվ Մ-16315-01/88 բանկային երաշխիքը նույնպես չի համապատասխանել հրավերի պահանջներին և այն նույնպես ենթակա էր մերժման:

Նախ, ինչպես արդեն նշվել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Բաց մրցույթի հրավերի 7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Մինչդեռ համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից «Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ին 10.09.2019թ. տրված թիվ Մ-16315-01/88 բանկային երաշխիքի 1-ի կետի «Սույն բանկային երաշխիքի /այսուհետ՝ Երաշխիք/ հանդիսանում է Ծաղքաձորի համայնքապետարան /այսուհետ՝ բենեֆիցիար/ կողմից «Հրազդանի ՃՇՇՀ» ԲԲԸ-ին տրամադրվելիք Ծաղկաձորի համայնքի Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանք կատարելու համար ապահովում:

Բանկային երաշխիքի 1-ին կետի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ այն հանդիսանում է ոչ թե հայտով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում, այլ Ծաղկաձորի համայնքի Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանք կատարելու համար ապահովում: Այլ կերպ ասած, նման ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ խոսքը գնում է ոչ թե հայտի ապահովման, այլ պայմանագրի ապահովման մասին, և նման ձևակերպման պայմաններում Ծաղկաձորի համայնքապետարանը զրկված է լինելու հնարավորությունից պահանջելու հայտի ապահովման գումարը մասնակիցների հայտով ստանձնած պարտավորությունները

չկատարելու դեպքում, քանի որ երաշխիքում հստակ ամրագրված է, որ այն հանդիսանում է ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՊԱՀՈՎՈՒՄ:

Բացի այդ, Բանկային երաշխիքի նույն 1-ին կետում անհասկանալիորեն ամրագրված է, որ Երաշխիքը հանդիսանում է Ծաղքաձորի համայնքապետարան կողմից «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին տրամադրվելի …… ապահովում, չնայած ակնհայտ է, որ այն պետք է հանդիսանար ոչ թե Ծաղքաձորի համայնքապետարան կողմից տրամադրվող ապահովում, այլ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրամադրվող ապահովում:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ բաց մրցույթի հրավերի 7.1-րդ կետի համաձայն …. հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, <u>որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:</u> Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Վերոհիշյալից ուղղակիորեն հետևում է, որ հայտի ապահովումը պետք է հավասար լինի մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, ավել լինելու դեպքում հայտը ենթակա չէ մերժման, սակայն պակասի դեպքում նման հայտը իմպերատիվ եթակա է մերժման:

«Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացրած հայտի գնային առաջարկը կազմում է 75 570 000 ՀՀ դրամ:

Այսիսով, «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովումը պետք է պակաս չլինի գնային առաջարկի հինգ տոկոսից:

Մինչդեռ բանկային երաշխիքի 2-րդ կետի համաձայն Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն պարտավորվում է Բենեֆիցիարի գրավոր պահանջով վերջինիս վճարել ՄԻՆՉև 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար…:

Բանկային երաշխիքով ամրագրված «Մինչև 4 500 000 ՀՀ դրամ գումար» վճարելու բանկի պարտականությունից ուղղակիորեն հետևում է, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն նման ձևակերպման շնորհիվ ստանում է հնարավորություն որոշելու, թե մինչև չորս միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ ինքչան գումար է պատրաստ վճարել որպես ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ապահովում, այդ թվում, ինչու չէ, օրինակ, հազար դրամ, տաս հազար դրամ կամ մեկ միլիոն դրամ:

Գտնում ենք, որ բանկային երաշխիքի 2-րդ կետի այս ձևակերպումն էլ ուղղակիորեն հակասում է հրավերի 7.1-րդ կետի պահանջներին, քանի որ նշված գումարը «Մինչև» բառը օգտագործելու հետևանքով պակաս է ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը, մասնավորապես գնային առաջարկին բանկային երաշխիքի մասով, պետք է գնահատեր որպես հրավերի պահանջներին չբավարարող, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել կոնսորցիումի հայտը, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել, որը հանգեցրել է գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված իրավական նորմերի խախտմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հանձնաժողովի 12.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ հայտը բավարար գնահատելու, նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ին առաջին տեղ գբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Վ.Հարությունյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
2. Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի պետական ռեգիստրի վկայականի պատճեն:
3. Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի տնօրեն Հ.Մնացականյանի անձը հաստատող փաստաթղթի պատճեն:
4. «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացրած հայտի գնային առաջարկի պատճեն:
5. «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Հովհաննիսյանի կողմից 12.09.2019թ. տրված լիազորագրի պատճեն:
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին 10.09.2019թ. տրված թիվ Մ-16315-01/88 բանկային երաշխիքի պատճեն:

Առդիր՝ 9 թերթ:

Հարգանքով՝

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի տնօրեն Հ.Մնացականյան

26. 09. 2019թ.